ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ № 113/3- -Լ «18» 06 2026թ.

ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՏՆՕՐԵՆԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) գիտական խորհրդի 2023 թ. մարտի 23-ի թիվ 9/2 որոշմամբ հաստատված ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի ընտրության ընթացակարգի» (այսուհետ՝ Ընթացակարգ) 5-րդ կետի պահանջները և ղեկավարվելով ԵՊՀ կանոնադրության 57-րդ կետի 10-րդ ենթակետով՝

հրամայում եմ՝

1. ԵՊՀ Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի տնօրենի պաշտոնը համալրելու նպատակով Ընթացակարգի համաձայն անցկացնել մրցութային ընտրություն:
2. ԵՊՀ գիտական խորհրդում ԵՊՀ Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի տնօրենի մրցութային ընտրությունը նշանակել 2026թ. օգոստոսի 25-ին:
3. ԵՊՀ գիտական քարտուղարին՝ ԵՊՀ Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի տնօրենի ընտրության նշանակման ու անցկացման վերաբերյալ հայտարարությունը հրապարակել ԵՊՀ ինտերնետային կայքէջում և սահմանված կարգով կազմակերպել թեկնածուների առաջադրման վերաբերյալ փաստաթղթերի ընդունման գործընթացը:
4. Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել ԵՊՀ պրոռեկտորներին, անձնակազմի կառավարման բաժնին և գիտական քարտուղարին:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ